**ՆԱԽԱԳԻԾ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

**«__»_____2026թ.** **N_____-Ն**

**ՈՐՈՇՈՒՄ**

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 18-Ի N 1-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

**Երևան քաղաքի ավագանին որոշում է.**

1. Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի «Երևան քաղաքի ավագանու կանոնակարգը ընդունելու մասին» N 1-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Որոշման նախաբանում «12-րդ հոդվածի» բառերը փոխարինել «8-րդ հոդվածի» բառերով.

2) Որոշմամբ հաստատված հավելվածի (այսուհետ՝ Հավելված) ամբողջ տեքստում «աշխատակազմի քարտուղար» բառերը և դրանց համապատասխան հոլովաձևերը փոխարինել «աշխատակազմի ղեկավար» բառերով և դրանց համապատասխան հոլովաձևերով.

3) Հավելվածի 18-րդ կետի 1-ին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Ավագանու նիստերի օրակարգը նիստից առնվազն երկու շաբաթ առաջ կազմում և հաստատում է Քաղաքապետը:».

4) Հավելվածի 23-րդ կետի վերջին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Անհետաձգելի համարվող նախագիծը հեղինակի կողմից կարող է լրամշակվել և ներկայացվել նիստը վարողին մինչև նշված հարցի քվեարկությունը:».

5) Հավելվածի 71-րդ կետի 2-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) նիստը վարողը հրապարակում է նիստին ներկա Ավագանու անդամների թվաքանակը: Եթե գրանցված ավագանու անդամների թիվը նիստի իրավազորության համար բավարար չէ, ապա գրանցումը շարունակվում է մինչև անհրաժեշտ թվով ավագանու անդամների գրանցվելը, բայց ոչ ավելի, քան երկու ժամ: Նշված ժամկետում նիստի իրավազորության ապահովման դեպքում նիստը վարողն ավագանու անդամներին տեղեկացնում է նիստը սկսվելու մասին, իսկ չապահովման դեպքում հերթական կամ արտահերթ նիստերը համարվում են չկայացած.».

6) Հավելվածի 71-րդ կետի 3-րդ ենթակետում «օրակարգի նախագիծը» բառերը փոխարինել «օրակարգը» բառով.

7) Հավելվածի 71-րդ կետի 5-րդ ենթակետում «հերթական նիստի օրակարգի հաստատումից» բառերը փոխարինել «առաջարկությունների քննարկումից» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**

# ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
# «ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 18-Ի N 1-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ

**Ընթացիկ իրավիճակը, իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը, առկա խնդիրների առաջարկվող լուծումները.**

Հիմք ընդունելով առ 30.08.2026 թվականի խմբագրությամբ գործող «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը Երևան քաղաքի ավագանին 2009 թվականի հունիսի 18-ի թիվ 1-Ն որոշմամբ ընդունել է Երևան քաղաքի ավագանու կանոնակարգը:

2026 թվականի հուլիսի 3-ին ընդունված և նույն թվականի օգոստոսի 30-ին ուժի մեջ մտած «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-387-Ն օրենքով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքը շարադրվել է նոր խմբագրությամբ: Նշված փոփոխության արդյունքում փոփոխվել են վերոնշյալ օրենքի հոդվածների և դրույթների համարակալումները, Երևանի ավագանու նիստի օրակարգի ընդունման ընթացակարգը, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարն այդ օրենքի և հարակից՝ «Համայնքային ծառայության մասին» օրենքում կատարված փոփոխության ուժով փոխվել է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ղեկավար:

Ելնելով վերոգրյալից, Նախագծով առաջարկվում է Երևանի քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N 1-Ն որոշումը համապատասխանեցնել գործող «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի պահանջներին:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**